

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ART

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ

Avetisyan1918@gmail.com

ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՄԵԾ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Քանալի բառեր¹ Էջմիածնի Մայր տաճար, վիմագրեր, Փիլիպոս Ա Աղբակեցի, Հակոբ Դ Զուղայեցի, Անտոն Չելեպի, Սահակ Հիզանցի, Զաքարե ոսկերիչ:

Ներածություն

Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան արքիդին կից վեր է հառնում մեծ զանգակատունը՝ ուշ միջնադարի հայ ճարտարապետության հիրավի լավագույն կառույցներից մեկը: Փիլիպոս Ա Աղբակեցու օրոք 1654 թ. հիմնարկված և Հակոբ Դ Զուղայեցու օրոք 1658 թ. ավարտված այս կոթողը հանդիսանում է նաև Մայր Աթոռի՝ XVII դարի ամենաթանկարժեք ու միևնույն ժամանակ ամենաբարդ իրականացված ծրագիրը՝ ուղեկցված պարսից պաշտոնյաների կողմից հրահրված բազմաթիվ խոչընդոտներով ու խարդավանքներով:

Զանգակատան ճարտարապետն է Սահակ Հիզանցին՝ մասնակցությամբ քրոջ որդու՝ ուստա Մովսեսի, որը 1657 թ. զոհվեց՝ զանգակատնից վայր ընկնելով: Շինարարության ծախսերը հոգացել է պոլսահայ մեծահարուստ Անտոն Չելեպին: Կամարակապ, քառամույթ բաց սրահներ հանդիսացող առաջին երկու հարկերով ու որպես երրորդ հարկ՝ ութսայուն ռոտոնդայով պսակված այս սլացիկ կառույցը, ծագելով XIII-XIV դդ. հայ ճարտարապետության

* Հոդվածը ներկայացվել է 05.10.2019, գրախոսվել է 05.10.19, ընդունվել է տպագրության 04.12.20:

Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատան շինարարական...

մեջ հանդիպող բազմահարկ հոգևոր ճարտարապետական ավանդույթներից, միևնույն ժամանակ սկզբնավորեց եռահարկ զանգակատների մի նոր ձև, որը հետագայում իր շարունակությունը գտավ Դարաշամբի, Ախթամարի, Տաթևի և այլ վանական կառույցներում¹: Արևելյան կողմից երկրորդ հարկի շարունակությունը կազմում է Ս. Հրեշտակապետաց խորանը, որը միևնույն ժամանակ հանդիսանում է տաճարի արևմտյան աբսիդի վերնահարկ: Չնայած իրենց առատությամբ ու ճոխությամբ եկեղեցուն անհարիր լինելուն՝ մեծ արժեք են ներկայացնում նաև զանգակատան քանդակները:



Նկ. 1. Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան զանգակատունը 1892 թ., լսնկ.՝ Մատթեոս Փափազյանցի:

Զանգակատան հիմնարկերի և կառուցման թվականների հարցի շուրջ

Մայր տաճարին ավելացված կառույցներից աղբյուրագիտական առումով ամենահարուստը մեծ զանգակատունն է: Պատմիչ Առաքել Դավրիժեցին մանրամասն նկարագրել է նրա կառուցման ընթացքը², հեղինակների (վար-

¹ Զանգակատան ճարտարապետության մասին՝ տե՛ս Սաղումյան 1976, 25, 27, Հարությունյան 1992, 383–384, Հասրաթյան 2011, 24–27:

² Դավրիժեցի 1990, 275–278:

Ավետիսյան Ա.

պետների) մասին էլ իմանում ենք վիմական արձանագրություններից³: Խնդրո առարկան տվյալ դեպքում մեծ զանգակատան շինարարական գլխավոր արձանագրությունն է՝ փորագրված երրորդ հարկը կազմող ռոտոնդայի գմբեթին: Արձանագրությունն առաջինը հրապարակել է Հովհաննես Շահխաթունյանցը, որը զանգակատան հիմնարկերի թվականը կարդացել է «ՌՃԳ» (1654), ինչն էլ կրկնել են հետագա բոլոր ուսումնասիրողները⁴: Վերջերս մեր կատարած այցելության ժամանակ նկատեցինք, որ նշված թվականը ոչ թե «ՌՃԳ» է, այլ «ՌՃԴ»՝ 1655 (նկ. 2), ինչը ոչ միայն հակասում էր Շահխաթունյանցի հրապարակած արձանագրությանը, այլև զանգակատան կառուցման ականատեսի՝ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմությանց» երկին (շարադրանքն ավարտվել է զանգակատան շինարարության ավարտից մի քանի տարի անց՝ 1662 թ.), որտեղ ևս, որպես զանգակատան հիմնարկերի թվական՝ նշված է «ՌՃԳ» (1654):



Նկ. 2. Արևմտյան զանգակատան հիմնարկերի թվականի հատվածը շինարարական գլխավոր արձանագրության մեջ (լուսանկարը՝ հեղինակի, 2019 թ.)

³ Սաղումյան 1976, 30–32:

⁴ Շահխաթունյանց 1842, հ. 1, 27, Ալիշան 1890, 218, Էփրիկեան 1903, 17, Կոստանեանց 1913, 186, Հարությունյան 2016, 54: Մեծ զանգակատան վիմագրերը լավագույնս ուսումնասիրած Սուրեն Սաղումյանը ևս, խոսելով շինարարական վիմագրի մասին (արձանագրության տեքստը չի հրապարակել) և հիմնվելով Շահխաթունյանցի աշխատության վրա, հիմնարկերի թվականը նշում է «1654» (Սաղումյան 1976, 27):

Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատան շինարարական...

Ստորև ներկայացնում ենք արևմտյան զանգակատան շինարարական արձանագրության ճշգրտված տարբերակը (նկ. 3)⁵։

Ի ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԼԱՆ: ՊԼԱՐԱԻՅ. ՇԱՀ. ԼԱԲԼԱՍԻ: Ս] ՆԱԵԼԻ: Ի ՀԱՅՐԼԱՊԵՏՈՒԹԵԼԱՆ: ՏԼԵԱՌՆ. ՓԼԻԼԻՊԼՈՍԻ: ԹՎԻՆ] ՌՃԴ: 1655) ՀԻՄՆԱՐՎԵՅԱԻ: ԵԻ ՏԼԵԱՌՆ. ՅԱԿՈԲԱՅ: ՋՈՒՂԱՅԵՅԻ: ՌԺՁ: (1657) ԱՎԱՐՏԵՅԱԻ: ԶԱՆՎԱԿԱՏՈՒՆՍ. ԾԱԽԼԻԻՔ ԱՆՏՈՂ ՊԼԱՐԼՈՆ: ՉԷԼԷՊԻՆ: Ի ՓԼԱՌՍ: ՔՐԻՍՏՈՍ]Ի. ԱՍՏՈՒԾՈՅ. ՄԵՐՈ:



Նկ. 3. Արևմտյան մեծ զանգակատան շինարարական արձանագրությունը (լուսանկարն ու գրչանկարը՝ հեղինակի)

Թվականների այս հակասությունը պարզելու և մեծ զանգակատան հիմնարկերի իրական թվականի մասին պատկերացում կազմելու համար հարկ է նախ ներկայացնել նրա կառուցման թվականների հիշատակումները վիմական և մատենագրական աղբյուրներում:

Բացի մեծ զանգակատան վերոհիշյալ վիմագրից, որտեղ շինարարության սկիզբն ու ավարտը նշվում են 1655 և 1657 թվականներով, զանգակատան (ներառյալ Ս. Հրեշտակապետաց խորանը) պատերին երեք անգամ հանդիպում է ՌՃԵ (1656) թվականը, մեկ անգամ՝ ՌՃԶ (1657) թվականը⁶:

⁵ Ավետիսյան 2020, 125–126:

⁶ ՌՃԵ (1656) թվականը երկու անգամ հանդիպում է զանգակատան երկրորդ հարկի հյուսիսային ճակտոնին, Տրդատ արքայի բարձրաքանդակից աջ և ձախ (Սաղումյան 1976, 28, Հարությունյան 2016, 58), մեկ անգամ՝ Ս. Հրեշտակապետաց խորանի արևելյան ճակտոնին, Աստվածատուր Կեսարացու արձանագրությունում (Սաղումյան 1994,

Մեծ զանգակատան կառուցմանը նվիրված հնագույն մատենագրական աղբյուրում՝ Առաքել Դավրիժեցու աշխատության մեջ, կարդում ենք. «Իբրև եմուտ թուականն ի ՌՃԳ յաւուրս աւագ պահոցն սկիզբն արար հիմն արկանել զանգակատան սրբոյ Էջմիածնի...»⁷, ապա և՝ «Արդ՝ այսու պայմանաւ յորժամ եհաս Փիլիպպոս կաթողիկոսն ի սուրբ Էջմիածին, սկիզբն արար շինութեան զանգակատանն, որոյ սկիզբն և հիմնարկութիւնն եղել ի թուականիս մերում ՌՃԳ յաւուրս աղուհացից...», «... և յամին յայնմիկ բարձրացաւ շէնքն մինչև կապեցան ներքին կամարքըն. և ժամանեաց ի վերայ ձմեռն, և փոխեցաւ թուականն ի ՌԺԴ...»⁸: Այսպիսով, ըստ պատմիչի, զանգակատան հիմնարկեքը տրվել է 1654 թ. մարտին («աւագ պահոցն» ու «աղուհացը» վերաբերում են Մեծ զատկին, որը մարտ ամսին է), և մինչ տարեվերջ (ձմեռն սկսելը) պատրաստ էին արդեն առաջին հարկի մույթերն ու կամարները: Սակայն հաջորդ տարվա մարտին Փիլիպպոս կաթողիկոսը վախճանվում է, զանգակատան կառուցումն էլ քաղաքական պատճառներով առժամանակ ընդհատվում է և վերսկսվում, ըստ Դավրիժեցու, 1657 թ. հոկտեմբեր, երբ հայրապետական գահին արդեն Հակոբ Դ Ջուղայեցին էր (1655–1680 թթ.): Զանգակատան շինարարությունն ավարտվում է 1658 թ., նույն տարվա Խաչվերաց տունին էլ (սեպտեմբեր) հանդիսավոր օծվում է խաչը⁹:

Սամուել Անեցու «Հաւաքմունքի» շարունակողներից մեկը XVII դարի երկրորդ կեսի մի ձեռագրում (Ժողովածոյ, ՄՄ Հ^մ 2965 ձեռ., էջ 115ա) գրում է. «ՌՃԳ. Էջմիածնի զանկակատունն սկսան շինել»¹⁰: 1790 թ. մեկ այլ ձեռագրում (Ժողովածոյ, ՄՄ Հ^մ 615 ձեռ., էջ 59բ) գրիչը «Բանք նշանակօղք թուականան Հայոց» վերնագրի տակ բերում է որոշ պատմական իրադարձություններ իրենց թվականներով, որոնք ավարտվում են հետևյալով. «ՌՃԳ թին ի սբ Էջմիածնայ զանգակատուն հիմնարկին»¹¹:

Այսպիսով, մեծ զանգակատան կառուցման հիմնարկեքի, կամ այլ խոսքերով՝ բուն շինարարական աշխատանքների մեկնարկի թվականի հարցում

106–107, **Հարությունյան** 2016, 56): ՌՃԶ (1657) թվականը հանդիպում է զանգակատան երկրորդ հարկի արևելյան ճակտոնին, ուստա Մուրադին նվիրված արձանագրությունից վեր (**Սաղումյան** 1976, 31, **Հարությունյան** 2016, 55):

⁷ **Դավրիժեցի** 1990, 275:

⁸ **Դավրիժեցի** 1990, 276:

⁹ **Դավրիժեցի** 1990, 277–278:

¹⁰ **Սամուել Անեցի** 2014, 340:

¹¹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի 2007, 68, տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ 1951, 396:

Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատան շինարարական...

ունենք պարզ հակասություն զանգակատան վիմագրերի և XVII–XVIII դդ. մատենագրական աղբյուրների միջև: Վերջին դեպքում պետք է դիտարկել գլխավորապես Դավրիժեցու աշխատությունը, քանզի վերոնշյալ երկու ձեռագրերի հեղինակներն ամենայն հավանականությամբ տվյալ տեղեկություններն այնտեղից են վերցրել:

Հիմնարկեքի թվականի հարցում, գործնականորեն, կարող էին սխալված լինել և՛ մեր վիմագրի հեղինակը, և՛ Դավրիժեցին¹²: Տվյալ դեպքում, սակայն, առավել հավանական է, որ հավատալու Դավրիժեցուն, և մի քանի պատճառներով: Նախ՝ պետք է դիտարկել Դավրիժեցու՝ զանգակատան սկզբնական շրջանի շինարարական աշխատանքների բավական պատկերավոր ու հանգամանալից նկարագրությունը: Խոսքը վերաբերում է թե՛ մինչև 1654 թ. ձմեռն ընկած աշխատանքներին («բարձրացաւ շէնքն մինչև կապեցան ներքին կամարքըն»), և թե՛ 1655 թ. մարտին՝ Փիլիպոս հայրապետի վախճանին հաջորդող մի քանի ամիսների դեպքերին («...եղև վախճան մեծի հայրապետին, տէր Փիլիպպոսի կաթողիկոսին. և խանգարեալ խափանեցաւ շինումն զանգակատան», ապա և՛ «...և յորժամ վախճանեցաւ կաթողիկոսն Փիլիպպոս՝ մնաց կիսաշէն զանգակատունն վասն չարութեան խանին, զի հանապազ ասէր՝ թէ ոչ թողում շէն զզանգակատունն՝ այլ քակելոց եմ զնա»)¹³: Երկրորդ՝ հիշենք Զաքարիա Քանաքեռցու երկու հիշատակումները Փիլիպոս և Հակոբ հայրապետների մասին, առաջինի դեպքում՝ «Քանզի Փիլիպոս կաթողիկոսն շինէր զզանգակատուն Սուրբ Էջմիածնի...», երկրորդի դեպքում՝ «Աւարտեաց և գշնոյթին զանկակատանն»¹⁴: Եվ վերջապես՝ խիստ կարևոր է 1655 թ. մարտին Փիլիպոս հայրապետի վախճանվելու հանգամանքը, քանզի ստացվում է, որ

¹² Դավրիժեցու դեպքում, բացի հիմնարկեքի թվականից, վիմագրերի հետ չեն համապատասխանում նաև շինարարության վերսկսման և ավարտի թվականները, ու թերևս այս հանգամանքը հաշվի առնելով է, որ զանգակատան կառուցման հատվածն ավարտելով՝ նա գրում է. «Արդ՝ ստոյգ պատմութիւն զանգակատանն այս է, թէպէտ ի վերայ նորին գրեալ թուականքն այլապէս են» (Դավրիժեցի 1990, 278): Շինարարության վերսկսման թվականի՝ Դավրիժեցու նշած տարեթիվը (1657) առավել քան վիճահարույց է՝ հաշվի առնելով վիմագրերում մի քանի անգամ հիշատակված 1656 թվականը: Այս դրվագը նկատել է դեռևս Սուրեն Սաղումյանը, որի կարծիքով՝ իրականում շինարարական աշխատանքները վերսկսվել են 1656 թ.: Ինչ վերաբերում է շինարարության ավարտի թվականի խնդրին, ապա, ըստ Սաղումյանի՝ երրորդ հարկի գմբեթի արձանագրությունը գրվել է 1657թ., սակայն ընդհանուր աշխատանքներն ավարտվել են 1658թ. (Սաղումյան 1976, 29):

¹³ Դավրիժեցի 1990, 276–277:

¹⁴ Քանաքեռցի 2015, 115, 124:

Ավետիսյան Ա.

երթ կառուցումը սկսվել է 1655 թ., ապա նրա օրոք գրեթե ոչինչ չի արվել (նախորդող ամիսներին ցրտի պատճառով աշխատանքներ չեն կատարվել), մինչդեռ մեր վիմագրում Փիլիպոսի դեպքում նշված է «հիմնարկեցաւ», Հակոբի դեպքում՝ «ավարտեցաւ» (և ոչ թե «շինեցաւ» կամ «կառուցուեցաւ»), իսկ տաճարի արևմտյան մուտքի բարավորի 1664 թ. արձանագրության մեջ երկու հայրապետներն էլ արդեն «հավասարապես» նշվում են որպես մեծ զանգակատան «կառուցողներ» և «գարդարողներ» («ՇՆՈՐՀԻԻ ԱՄՍՈՒԾՈՅ. ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԵ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՍԷՍԼԱՅՆ ՓԻԼԻՊՈՍԻ ԵՒ ՅԱ / ԿՈԲԱՅ. ՀՐԱՇԱԿԵՐՏԵՑԱԻ ԶԱՆԿԱԿԱՏՈՒՆՍ ԵՒ ԾԱՂԿԵՑԱԻ: Ի ԹՎԱՂԱՎԱՆԻՍ: ՌՃԺԳ:»)¹⁵:

Այսպիսով ակնհայտ է դառնում, որ մինչև Փիլիպոս Աղբակեցու վախճանը մեծ զանգակատան շինարարության մասով բավական աշխատանքներ են արված եղել, և Դավրիժեցու նշած՝ հիմնարկերի 1654 թվականը առավել, քան արժանահավատ է:

Ինչ վերաբերում է մեծ զանգակատան շինարարական արձանագրության մեջ նշված «1655» թվականին, ապա դրա պատճառը, կարծում ենք, եղել է ոչ այնքան վրիպակը, որքան ավելի հետաքրքիր մի հանգամանք: Ինչպես գիտենք, ճարտարապետ Սահակ Հիզանցու կառուցած շինություններից փաստված կերպով հայտնի են միայն Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատունն ու Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին¹⁶: Սակայն կա ևս մի կառույց, որը կարելի է վերագրել Հիզանցուն. դա ուշ միջնադարի հայ ճարտարապետության խոշորագույն նվաճումներից մեկն է՝ Դարաշամբի (Ատրպատական) Մաղարդավանքի Ս. Ստեփանոս նախավկա եկեղեցին՝ կառուցված 1643–1655 թթ. Հակոբ վարդապետ Զուղայեցու (ապագա Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոս) նախաձեռնությամբ¹⁷: Արտաքին շքեղ քանդակազարդմամբ աչքի ընկնող այս եկեղեցու ճարտարապետությունը մանրակրկիտ ուսումնասիրվել են Հարթ-

¹⁵ Շահխաթունեանց 1842, հ. 1, 27–28, Ալիշան, 1890, 218, ՄՄ թիվ 6273 ձեռ. (Փիրղալեմյան), 390ա, Էփրիկեան 1903, 17, Կոստանեանց 1913, 189, Սաղումյան 1976, 29, Հարությունյան 2016, 54–55:

¹⁶ Ս. Գևորգ եկեղեցու շինարարության ընթացքում էլ՝ 1667 թ., Հիզանցին կնքում է իր մահկանացուն, իսկ կառույցն ավարտում է նրա փեսա Մուրադը (Սաղումյան 1976, 30):

¹⁷ Եկեղեցու կառուցման մասին՝ տե՛ս Դարիժեցի 1990, 281, Քանաքեռցի 2015, 123–124, Շահխաթունեանց 1842, հ. 2, 313–315, Ալիշան 1893, 519–520, Ոսկեան 1942, 545–546, Մինասեան 1971, 21–22, Հախնազարյան 2000, 23–25, Հախնազարյան 2012, 214–216:

Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատան շինարարական...

մուտ Հոֆրիխտերի¹⁸, հետագայում նաև Արմեն Հախնազարյանի կողմից¹⁹, սակայն Ս. Ստեփանոս եկեղեցու և Էջմիածնի Մայր տաճարի միջև եղած ճարտարապետական և գեղարվեստական զուգահեռների մասին առաջին անգամ խոսել է Արմեն Ղազարյանը՝ առաջադրելով մի շարք ուշագրավ վարկածներ²⁰: Եթե կետերով և ժամանակագրական հերթականությամբ համառոտ ներկայացնենք այդ վարկածները, ստացվում է հետևյալը.

Ա. Մովսես Տաթևացու օրոք (1629–1632 թթ.) Մայր տաճարի կիսաքանդ գմբեթը ընդամենը վերանորոգվել է (ճարտարապետական հորինվածքը չի փոխվել),

Բ. 1643–1655 թթ. Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է Սահակ Հիզանցու ճարտարապետությամբ, ընդ որում գմբեթը՝ Էջմիածնի Մայր տաճարի հին՝ վաղմիջնադարյան գմբեթի նմանությամբ, պարզապես XVII դարին բնորոշ զարդաքանդակների հավելմամբ,

Գ. Դարաշամբում իրեն լավագույնս դրսևորած և արդեն բավական հոշակ վայելող Սահակ Հիզանցին Էջմիածնից՝ նախկին պատվիրատու և արդեն կաթողիկոս դարձած Հակոբ Զուղայեցուց ստանում է նոր պատվեր՝ ի դեմս Մայր տաճարի մեծ զանգակատան, և իր խմբի հետ մեկնում է Էջմիածին,

Դ. մեծ զանգակատան շինարարության ավարտից հետո, մեկ համատեղ շինարարական ծրագրի շրջանակներում, նույն Անտոն Չելեպիի մեկենասությամբ և Սահակ Հիզանցու ճարտարապետությամբ 1664 թ. մեկնարկում է Մայր տաճարի գմբեթի վերակառուցումը՝ թմբուկի և վեղարի բարձրացմամբ և այստեղ արդեն՝ Ս. Ստեփանոս եկեղեցու գմբեթի որոշ զարդաքանդակների կրկնմամբ:

Ա և Դ վարկածները դուրս են մեր խնդրի շրջանակներից, այնպես որ ստորև կխոսենք միայն Բ և Գ վարկածների (որոնց հետ հիմնականում համակարծիք ենք)՝ Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատան և Ս. Ստեփանոս եկեղեցու միջև զուգահեռների և միևնույն հեղինակների (վարպետների) խնդրի շուրջ:

Այն, որ Դարաշամբի Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է Սահակ Հիզանցու ճարտարապետությամբ, մենք ևս առավել քան հավանական ենք համարում: Ավելին, Դարաշամբ կատարած մեր այցելության ընթացքում (2014

¹⁸ Hofrichter, Uluhogian 1980, 5–9.

¹⁹ Հախնազարյան 2000, 27–31, Հախնազարյան 2012, 256–268:

²⁰ Казарян 2007, 111–113.

թ.) տեղում համոզվեցինք նաև Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատան և Ս. Ստեփանոս եկեղեցու քանդակագործ(ներ)ի նույնության հարցում: Ս. Գրիգոր Լուսավորչի (զանգակատանը՝ երկրորդ հարկի հարավային ճակտոնին, Ս. Ստեփանոս եկեղեցում՝ թմբուկի հարավահայաց նիստին) և վեցաթև սերովքների (զանգակատանը տեղ են գտել առաջին հարկի առաստաղի և երկրորդ հարկի առագաստների վրա, Ս. Ստեփանոս եկեղեցում՝ թմբուկի հյուսածո սլաքաձև կամարների միջև) բարձրաքանդակների՝ կրկնօրինակի հասնող նմանությունը, երկու զարդաքանդակների միջև զետեղված խաչաքանդակի կիրառումը²¹, ինչպես նաև առանձին զարդաքանդակների պարզ կրկնությունը²² նույնիսկ թռուցիկ հայացքից մատնում են միևնույն ձեռագիրը: Խիստ ուշագրավ է նաև Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկի հյուսածո սլաքաձև կամարների մշակման յուրահատուկ ձևը, ինչը նույնությամբ կրկնվում է Մայր տաճարի զանգակատան առաջին հարկի կամարներում և մեծ գմբեթի թմբուկի նիստերում²³:

Միով բանիվ, դժվար է Ս. Ստեփանոս եկեղեցու քանդակներում գտնել մի զարդամոտիվ, որն իր համանման օրինակը չունենա Մայր տաճարի մեծ զանգակատանը, իսկ նմանօրինակ նույնությունները չէին կարող պատահականություն լինել: Այստեղ աներկբայորեն խոսքը գնում է միևնույն քանդակագործի մասին, և բարեբախտաբար, մեծ զանգակատան մի վիմագրից հայտնի է նաև նրա անունը, որ է «ոսկերիճ Զաքարէն»²⁴: Վերջինս զանգակատան

²¹ Ս. Հրեշտակապետաց խորանի խաչաքանդակները (գտնվում են հյուսիսահայաց և հարավահայաց ճակտոններում, լուսամուտներից վեր) զետեղված են ութաթև աստղազարդերի միջև, իսկ Ս. Ստեփանոս եկեղեցում (թմբուկի բոլոր տասնվեց նիստերի ճակտոններին)՝ վարդյակների միջև:

²² Ս. Հրեշտակապետաց խորանի վերոնշյալ խաչաքանդակների կողքերի աստղազարդերը, որոնք առկա են նաև զանգակատան առաջին հարկի քիվի զարդագոտու վրա, նույնությամբ տեսնում ենք Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկին՝ նիստերի պատկերաքանդակների և հյուսածո սլաքաձև կամարների միջև, իսկ զանգակատան երկրորդ հարկի արևելահայաց ճակտոնի տեր Օվանեսի և ուստա Մովսեսի խաչաքանդակները նույնական են Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկի նիստերի ճակտոնների վերոնշյալ խաչաքանդակների հետ:

²³ Պարանի առանձին թելերը միմյանց հետ հատման հատվածում երկու կողմերից փոսորակով առանձնացված են միմյանցից, որի արդյունքում թելերն առավել են ընդգծվում ու շեշտվում: Մայր տաճարում մոտ երեք տասնամյակ անց կառուցված երեք փոքր զանգակատների մոյթերը կապող կամարների հատվածներում ևս, ոճական հարազատությունը պահպանելու նպատակով, կառուցողները որոշել են կրկնել այդ պարանագոտին, սակայն նշված մանրամասնը այնտեղ այլևս չի նկատվում, քանզի քանդակագործն այլ է:

²⁴ Սաղումյան 1976, 32, Հարությունյան 2016, 56:

Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատան շինարարական...

երկրորդ հարկի արևելահայաց ճակտոնին հիշատակված է որպես «զանգակատան նկարող», ինչն առաջին հերթին հարկ է հասկանալ որպես քանդակագործ, քանզի մեծ զանգակատան գեղարվեստական ձևավորման գերակշիռ մասը կազմում է քանդակագործումը²⁵: Ի դեմս Զաքարե ոսկերչի՝ գործ ունենք հայկական միջնադարյան քանդակագործության ավանդույթները շարունակող, և միևնույն ժամանակ, իր ոճի մեջ խիստ յուրօրինակ մի վարպետի հետ, որին կարելի է XVII դարի լավագույն քանդակագործը համարել²⁶:

Այժմ վերադառնանք երկու կառույցների թվականներին: Ըստ Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկի վիմագրերից մեկի՝ կառույցի շինարարությունն ավարտվել է 1655 թ.²⁷: Նույն թվականի մարտին, ինչպես նշեցինք, Փիլիպոս հայրապետը մահանում է, և մեկ ամիս անց Հակոբ Զուղայեցին, Դարաշամբից տեղափոխվելով Էջմիածին, նստում է հայրապետական գահին: Մեծ զանգակատունը, որի շինարարությունը ընդհատվել էր, հարկ էր շարունակել, իսկ այդ գործում կային կաթողիկոսի կողմից լավագույնս փորձված և իրենց արդարացրած վարպետներ, ինչպիսիք էին Սահակ Հիզանցին ու Զաքարե ոսկերչը՝ իրենց օգնականներով: Վերջիններս էլ շարունակում են զանգակատան շինարարությունը՝ ավարտելով այն 1658 թ.²⁸:

²⁵ Սուրեն Սաղումյանը Զաքարեին է վերագրում թե՛ քանդակագործումը և թե՛ որմնանկարումը (**Սաղումյան** 1976, 32): Չժխտելով այդ վարկածը՝ պետք է նշել, սակայն, որ զանգակատան՝ մեր օրերը հասած որմնանկարներից, այն էլ խիստ վերապահումով, Զաքարեին կարելի է վերագրել միայն արևմտյան մուտքից աջ և ձախ գտնվող Պողոս և Պետրոս առաքյալների մեծադիր պատկերները, քանզի զանգակատան մնացյալ բոլոր որմնանկարները ոճական և պատկերագրական առումով հարում են աղոթասրահի որմնանկարներին և ամենայն հավանականությամբ Հովնաթան Հովնաթանյանի ձեռքի գործն են՝ արված 1780-ական թթ.:

²⁶ Մեր նախնական դիտարկումներով Զաքարեին են պատկանում նաև Գետաթաղի (Սյունիք) Ս. Աստվածածին (1662 թ.), Լորի (Սյունիք) Ս. Գևորգ (1664–1666 թթ.), Մուղնու Ս. Գևորգ (1664–1670 թթ.) և հավանական է՝ նաև Շոռոթի Ս. Հակոբ (վերակառուցվել է 1651 թ.) և Յղնայի Ս. Աստվածածին (վերակառուցվել է 1653 թ.) եկեղեցիների քանդակային հարդարանքը:

²⁷ **Շահխաթունեանց** 1842, հ. 2, 315, **Ալիշան** 1893, 520, **Կոստանեանց** 1913, 186, **Ոսկեան** 1942, 531, **Մինասեան** 1967, 2, **Մինասեան** 1971, 31, **Hofrichter, Sluhogian** 1980, 12, **Sluhogian** 1981, 96, **Հախնազարյան** 2000, 24, **Հախնազարյան** 2012, 309:

²⁸ Դատելով արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունից՝ քանդակագործման, միգրացե նաև որմնանկարման աշխատանքները շարունակվել են մինչև 1664 թ.: Ըստ Շահխաթունյանցի՝ արձանագրության «1664» թվականը վերաբերում է զանգակատան առաջին հարկը ներքուստ «գոյնզգոյն երանգներով ծաղկելուն» (**Շահխաթունեանց**

Ավետիսյան Ա.

Վերջապես, ինչո՞վ պայմանավորել զանգակատան շինարարության արձանագրության մեջ նշված հիմնարկերի «1655» թվականը. անտարակուսելի՝ Սահակ Հիզանցու և իր խմբի աշխատանքների մեկնարկով, որը պետք է որ լիներ 1655 թ. ապրիլին հաջորդող մի քանի ամիսների շրջանակում:

Եզրակացություն

Վիմագիր և մատենագիտական աղբյուրների քննությունը ցույց տվեց, որ Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատան հիմնարկերը իրոք տեղի է ունեցել ՌՃԳ /1654/ թվականին, իսկ վիմագրում նշված ՌՃԴ /1655/ թվականը Սահակ Հիզանցու և նրա հետ աշխատող մյուս վարպետների աշխատանքների մեկնարկի տարեթիվն է: Զանգակատան կառուցումն ավարտվել է 1658 թ.:

Դարաշամբի Մաղարդավանքի Ս. Ստեփանոս նախավկա եկեղեցին նույնպես կառուցել է Սահակ Հիզանցին, իսկ քանդակազարդումը կատարել է նույն վարպետը՝ Զաքարիա ոսկերիչը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. 1890, Այրարատ, Վենետիկ - Ս. Ղազար, 590 էջ:

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ - Ս. Ղազար, 563 էջ:

Առաքել Դարիժեցի 1990, Գիրք պատմության (գիտաքննական բնագրեր), աշխ. Լենա Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:

Ավետիսյան Ա. 2020, Նորահայտ վիմական արձանագրություններ և վիմագրական ճշգրտումներ Էջմիածնի Մայր տաճարում, Հայագիտության հարցեր, № 1, էջ 113–128:

Զաքարիա Քանաքեռցի 2015, Պատմություն. Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհաննու վանից (գիտաքննական բնագրեր), աշխ. Արմեն Վիրաբյանի, Երևան, Հեղ. հրատ., 243 էջ:

Էփրիկեան Ս. 1903, Ս. Էջմիածին 303–1903. Պատկերազարդ նկարագրություն, Վենետիկ - Ս. Ղազար, 50 էջ:

Կոստանեանց Կ. 1913, Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Ս. Պետերբուրգ, Տպարանն գիտութեանց ճեմարանի Կայսերականի, XXXI + 292 էջ:

Հախնազարյան Ա. 2000, Սբ. Թադէոս առաքելի եւ Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքերը, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն, 31 էջ:

1842, հ. 1, 28), ըստ Սաղումյանի՝ այն ընդամենը մատնանշում է արձանագրության փորագրման ժամանակը (**Սաղումյան** 1976, 29):

Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատան շինարարական...

Հախնազարյան Ա. 2012, Արտագի երեք վանքերը, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն, 351 էջ:

Հասրաթյան Մ. 2011, Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան ճարտարապետությունը, Տարեգիրք Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի. գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, էջ 24–27:

Հարությունյան Ա. 2016, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 548 էջ:

Հարությունյան Վ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս», 632 էջ:

Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի 2007, հատոր Գ, կազմ.՝ Եգանեսան Օ., Երևան, «Մագաղաթ», 2004 էջ:

Մանր ժամանակագրություններ 1951, XIII–XVIII դդ., հ. I, կազմ.՝ Հակոբյան Վ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 453 էջ:

Մինասեան Լ. 1967, Ճամբորդական տպաւորութիւններ Ս. Ստեփանոս նախավկայի վանքից եւ Թաւրիզ ու Թեհրան քաղաքներից, «Ալիք», թիւ 224, էջ 2:

Մինասեան Լ. 1971, Իրանի հայկական վանքերը, Թեհրան, «Մոդեռն», 152 էջ:

Շահխաթունեանց Յովհաննես եպիսկոպոս 1842, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատոր առաջին, Ս. Էջմիածին, 1842, 293 էջ, հատոր երկրորդ, Ս. Էջմիածին, 1842, 409 էջ:

Ոսկեան Հ. 1942, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, Մխիթարյան տպ., 388–742 էջ:

Սաղումյան Ս. 1976, Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, «Էջմիածին», Ե, էջ 25–33:

Սաղումյան Ս. 1994, *Վիմագիր մատուցներ*, «Էջմիածին», Ը, էջ 100–112:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ 2014, Ժամանակագրութիւն, աշխ. Կարեն Մաթետոսյանի, Երևան, «Նաիրի», 504 էջ:

Փիրղալէմեան Ղևոնդ եպիսկոպոս 1868-1889, Նշխարք պատմութեան հայոց (ՄՄ Հ^փ 6273 ձեռ.), 573 թերթ:

Казарян А. 2007, Кафедральный собор Сурб Эчмиадзин и восточнохристианское зодчество IV–VII веков, Москва, «Locus Standi», 216 с.

Hofrichter H., Uluhogian G. 1980, S. Stepanos /Documenti di Architettura Armena, vol. 10/, Milano, 71 p.

Uluhogian G. 1981, Silloge delle epigrafi Armene di S. Stefano di Giulfra /Ricerca sull'architettura Armena, vol. 22/, Milano, 185 p.

СТРОИТЕЛЬНАЯ НАДПИСЬ БОЛЬШОЙ КОЛОКОЛЬНИ ЭЧМИАДЗИНСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА И ВОПРОС ДАТЫ ЕЕ ОСНОВАНИЯ

АВЕТИСЯН А.

Резюме

Ключевые слова: Эчмиадзинский Кафедральный собор, эпиграфические надписи, Филиппос I Агбакеци, Акоп IV Джугаеци, Антон Челепи, Саак Хизанци, ювелир Закаре.

Западная или большая колокольня Эчмиадзинского Кафедрального собора, спроектированная архитектором Сааком Хизанци, была построена Филиппосом I Агбакеци (Филиппос Агбакский). Ее строительство было начато в 1654 г. и завершено в 1658 году, в годы правления Акопа IV Джугаеци (Акоп Джульфский). Колокольня по праву считается одним из лучших образцов армянской архитектуры позднего средневековья. Главная строительная надпись этого трехэтажного памятника, высеченная на куполе ротонды третьего этажа, указывает на дату основания и завершения. В надписи упоминаются также имена двух католикосов и благотворителя.

Эпиграфическая надпись издавалась неоднократно, однако издавший ее впервые Ованес Шаххатунян неверно истолковал дату начала постройки – «ՌՃԳ» (1654). Эта ошибка была повторена последующими авторами. В надписи указан 1655-й год («ՌՃԵ»), что противоречит не только публикациям вышеупомянутых авторов, но и всем историческим источникам, имеющим отношение к строительству колокольни, в частности, наиболее достоверному из них - «Истории» Аракела Даврижеци (Аракел Тебризский), в которой упоминается 1654 как год постройки колокольни.

Проведенные нами исследования явствуют о том, что датой начала строительства колокольни действительно является 1654 год, а упомянутый в надписи 1655 год указывает на год переезда Саака Хизанци в Эчмиадзин, где было продолжено строительство колокольни.

THE BUILDING LEGEND OF THE BIG BELFRY OF ETCHMIADZIN CATHEDRAL AND ITS FOUNDATION DATING

AVETISYAN A.

Summary

Key words: Etchmiadzin Cathedral, epigraphs, Philipos I Aghbaketsi, Hakob IV Jughaetsi, Anton Chelepi, Sahak Hizantsi, jeweler Zakare.

The west or big belfry of Etchmiadzin Cathedral, designed by the architect Sahak Hizantsi, was built by Philipos I Aghbaketsi (Philipos of Aghbak) in 1654 and completed in 1658 during the reign of Hakob IV Jughaetsi (Hakob of Julfa). The belfry is truly considered to be one of the finest structures of the Armenian architecture of the late Middle Ages. The main inscription, concerning the building of this three-storey monument is carved on the third floor rotunda dome showing the dates of its foundation and completion. The names of the two catholicoses and the sponsor are also mentioned.

The epigraph was previously published many times, however, the first publisher, Hovhannes Shahkhatunyan, misread the date of the foundation (ՌՃԳ - 1654). Later this mistake was repeated by all subsequent writers. Yet, the epigraph says «ՌՃԴ» which corresponds to 1655. This contradicted the publications of not only Shahkhatunyan and others, but also all historical sources, concerning the construction of the belfry, the most trustworthy of them being «History» by Arakel Davrizhetsi (Arakel of Tabriz), which also mentions 1654 as the foundation year of the belfry.

Our research allows to state that the foundation of the belfry, in fact, took place in 1654, whereas the date mentioned in the epigraph (1655) refers to the year when Sahak Hizantsi and his team moved to Etchmiadzin in order to continue the construction of the belfry.